ԿԱՌԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆ, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1984, 323 էջ։

Կառլեն Միրումյանի «Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը» ուսումնասիրությունը հաջողված գործ է, այն բազմակողմանիորեն է ներկայացնում XI—XII դարերի հայ մտավորականին։

Մենագրության առաջին գլուխը նվիրված է Հովհաննես Սարկավագի ապրած դարաշրջանի պատմական ու սոցիալ-քաղաքական իրավիճակի և նրա կյանքի ու ստեղծագործության բնութագրմանը։ Տրվում են զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հիմնական հատկանիշները՝ քաղաքների, արհեստների և առևտրի զարգացումն ու երկրի տնտեսության մեջ դրանց դերի և նշանակության բարձրացումը, քաղաքային և գյուղական բնակչության սոցիալական շերտավորման խորացումը, դրամական փոխհարաբերությունների և հակակրոնական-հակաֆեոդալական շարժումների մեծացումը և այլն։ Կ. Միրումյանը նշում է, որ հասարակական հարաբերությունների զարգացման այդ հիմքի վրա աճում է «հետաքրքրությունը դեպի բնագիտական և տեխնիկական գիտելիքները։ Արվեստի և գրականության մեջ ասպարեզ են գալիս նոր կենսատու հոսանքներ և ուղղություններ» (էջ 20)։

Երկրորդ գլխում տրվում են Սարկավագի բնագիտական հայացքները։ Այստեղ Սարկավագը ներկայացվում է որպես բնագետ և միջնադարյան գիտնական։ Գլուխը բաղկացած է 4 ենթագլխից. առաջինում բերվում է Սարկավագի տարրաբանությունը (տարրերի մասին ուսմունքը), երկրորդում՝ տիեզերագիտությունը, երրորդում՝ տոմարագիտական և մաթեմատիկական, իսկ չորրորդում՝ կենսաբանական և բժշկագիտական հայացքները։ Սարկավագի ուսմունքը տարրերի մասին տարբերվում է հին աշխարհի մտավորականներից, իրավացիորեն նկատում է հեղինակը։ Եթե առաջինների (օրինակ՝ Արիստոտելի) մոտ տարրը դիտվում է որպես «սկզբնապատճառ», ապա Սարկավագի մոտ «սկզբնապատճառը» և «տարրը» տարբերվում են միմյանցից, քանի որ աշխարհի սկզբնապատճառը աստված է, նա է ստեղծել աշխարհը։ Այնուհետև նշվում է, որ նրանց «հիմնական և երկրորդական հատկությունների առկայությունը որոշում է նաև տարրերի միջև եղած տարբերությունները» (էջ 47)։ Կ. Միրումյանը ցույց է տալիս նաև դիալեկտիկական որոշ տարրերի առկայությունը տարրերի մասին Սարկավագի ուսմունքում, որն ըստ էության ունի նաև մատերիալիստական միտումներ։ Տիեզերագիտությունը ենթագլխում շարադրվում են տիեզերքի մասին Սարկավագի ըմբռնումները, ըստ որի երկիրը գնդաձև է և շրջապատված է երկնային ոլորտներով, որոնց, նաև հողմերի, շնորհիվ երկիրը մնում ու պահվում է տիեզերքի կենտրոնում։ Անդրադառնալով Սարկավագի տոմարագիտական և մաթեմատիկական հայացքներին, Կ. Միրումյանը եզրակացնում է, որ նա կուրորեն չէր կրկնօրինակում նախորդ գիտնականներին, այլ զարգացնում էր նրանց մտքերը և իր առջև դրված նպատակի համապատասխան շարադրում ձեռքի տակ եղած փաստական նյութը։

Սարկավագի բուն փիլիսոփայական հայացքների վերլուծությունը սկսվում է երրորդ գլխից։ «Թեև Սարկավագը,— գրում է Կ. Միրումյանը,— չի թողել զուտ փիլիսոփայական ծավալուն երկեր, սակայն նրա ողջ գիտագրական ժառանգությունը ներթափանցված է փիլիսոփայական վերլուծության ոգով... Գիտափիլիսոփայական մտածողության ռացիոնալ հատիկներ, աշխարհիկ, մատերիալիստական զաղափարներ և դրույթներ ցրված են նրա գրեթե բոլոր հայտնի աշխատություններում» (էջ 109)։ Հեղինակն այնուհետև վերլուծում է Ս·արկավագի զոյաբանական հայացքները, տալով միաժամանակ նրա կողմից կրեացիոնիզմի հարցի նկատմամբ օբյեկտիվ իդեալիզմից շեղվող կարծիքների քննադատությունը։ Անցնելով Սարկավագի իմացաբանական հայացքներին, Կ. Միրումյանն անդրադառնում է զգայական և տրամաբանական իմացության աստիճանների մի շարք խնդիրների։ Իմացաբանությանը նվիրված մասն ավարտվում է փորձի մասին Սարկավագի հայացքների շարադրան-

քով։ Պետք է ասել, որ աշխատության այս մասը առավել հաջողված է և էականորեն լրացնում է մինչև այսօր փորձի վերաբերյալ Սարկավագի հայացքների վերլուծությունը։ Այստեղ բացահայտվում է, թե ինչ է հասկանում Սարկավագը «փորձ» (պրակտիկա) ասելով, թե ինչով են տարբերվում փորձի մասին Սարկավագի և XIII դ. եվրոպական մտածող Ռոջեր Բեկոնի, որը ճանաչվում է որպես փորձնական գիտելիքի նախահայր, հայացքները և այլն։ Հաջորդ՝ երրորդ, ենթագլուխը նվիրված է Սարկավագի տրամաբանական հայացքներին։ Կ. Միրումյանը հմտորեն կարողացել է Սարկավագի առանձին ասույթների հիման վրա վերլուծել նրա տրամաբանական հայացքները։ Չնայած նյութի սակավությանը, այնուամենայնիվ, նրան հաջողվել է շարադրել Սարկավագի տրամաբանական հայացքների վերաբերյալ բավականաչափ մանրամասն համակարգ։

Հաջող, անցյալի հետազոտությունների համեմատ հարուստ ու բազմակողմանիորեն ներկայացված Սարկավագի էսթետիկական հայացքները։ Այդ մասին խոսվում է աշխատության չորրորդ գլխում։ Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ միջնադարյան հայ հեղինակի էսթետիկական հայացքները նրա հայացքների համակարգում արժանի տեղ են գրավում, որ «նա ստեղծել է ամբողջական տեսություն արվեստի և իրականության էսթետիկական հարաբերությունների, արվեստի ծագման և նրա առարկայի, ֆունկցիաների էության մասին։ Հատկանշական է, որ «Բան իմաստության» պոեմում ամփոփված է սարկավագյան էսթետիկայի էությունը։ Նրա բազմաթիվ աշխատություններում տեղ գտած ընդարձակ արտահայտությունները էսթետիկայի մասին, որոնք մասնավորապես վերաբերում են երաժշտական էսթետիկային, էլ ավելի են ամբողջացնում հայ մտածողի ընդհանուր էսթետիկական տեսությունը» (էջ 178)։ Սարկավագի էսթետիկան ներկայացնելիս Կ. Միրումյանն ուսումնասիրել է բավականաչափ բազմակողմանի և հարուստ գրականություն, ծանոթացել է այդ գրականության մեջ արծարծված խնդիրներին ու պրոբլեմներին, խորացրել իր գիտելիքները այդ, հատկապես երաժշտական էսթետիկայի, բնագավառում և համապատասխանորեն արտացոլել դրանք իր աշխատության էջերում։

Հինգերորդ գլխում վերլուծվում են Սարկավագի սոցիալ-քաղաքական և բարոյագիտական հայացքները։ Սարկավագն «Իր երկերում արտացոլել է հայկական միջնադարի գաղափարախոսական, սոցիալ-քաղաքական և հոգևոր պայքարի բազմաթիվ հարցեր, արձագանքել է այն կարևորագույն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել հայ ժողովրդի կյանքում նրա պատմության ամենադրամատիկ էջերից մեկում... Սարկավագն անդրադառնում է քաղաքական, պետական կառավարման ու ընտանեկան իրավունքին, դատավարության, բարոյականության նորմերին, միջնադարյան բարոյագիտության կատեգորիաներին՝ արդարություն, արիություն, առաքինություն, մարդկային կյանքում բարի ու չար սկզբունքների փոխհարաբերությանը վերաբերող մի շարք հարցերի քննության և այլն» (էջ 224)։ Նյութի շարադրանքի ընթացքում Կ. Միրումյանը մեկ առ մեկ անդրադառնում է այս հարցերին, ներկայացնելով դրանց մասին Սարկավագի արտահայտած տեսակետները և վերլուծելով դրանք։ Աշխատության էջերում զգալի տեղ է բռնում բարոյական և սոցիալական առումով ըստ Սարկավագի խորթ բարքերի ու արարքների քննադատությունը, որն ընդգրկում է ընդհուպ մինչև աստծու և աստվածաբանական ոլորտը։

Աշխատությունն ունի «Ներածություն» և «Վերջաբան», ռուսերեն լեզվով «Ամփոփում», «Ծանոթագրություններ» և անձնանունների ցանկ։ Հատկապես արժեքավոր է «Հովհաննես Սարկավագի գրական ժառանգությունը (մատենագիտություն)» բաժինը, որը, ինչպես նշում է հեղինակը, «սպառիչ լինելու հավակնություն չունի», սակայն ընդգրկում է Սարկավագի 77 անուն աշխատություն։ Այս ամենը ցույց է տալիս, որ Միրումյանի քննարկած պրոբլեմներն ու հարցերը բավականաչափ բազմազան են, և նա աշխատել է առավել չափով ընդգրկել Հովհաննես Սարկավագի աշխարհայացքի բաղադրիչ մասերը, որ նա կատարել է հմտորեն և գիտական պատշաճ մակարդակով։

Կ. Միրումյանի լույս ընծայած այս առաջին մենագրությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից։ Դրանցից մեկն այն է, որ աշխատության որոշ էջերի շարադրանքում բացակայում է պարզությունը և նկատելի են անորոշություններ (էջ 94—99)։ Աշխատության մեջ առկա են չափազանցված գնահատականներ։ Միրումյանը գրում է, որ ըստ Սարկավագի «աստված ստեղծել է ոչ թե բնության ողջ բազմազանությունը, այլ միայն տարրերը, որոնց զանազան համակցություններ արդյունք են ինչպես անօրգանական, բուսական և կենդանական աշխարհները, իրենց բոլոր սեռերով ու տեսակներով, այնպես էլ մարդը» (էջ 90)։

Անհավանական է, որ Սարկավագը նման «տեսակետ» պաշտպանած լինի, նման տեսակետը չի բխում նաև այն մեջբերումից, որն այնուհետև բերում է Կ. Միրումյանը։ Ինչպիսի վերապահություններ էլ անելիս լինենք, Սարկավագը, լինելով կրեացիոնիստ-աստվածաբան, չէր կարող պաշտպանել նման կարծիք։ Դա են ապացուցում Միրումյանի բերած մատերիալիստական և դուալիստական ուսմունքների, առհասարակ աշխարհի ստեղծման հարցում քրիստոնեական դիրքերից շեղվող տեսակետների սարկավագյան քննադատությունը (էջ 113—118)։

198-րդ էջի շարադրանքից հետևում է, որ ըստ Սարկավագի «բնական գործունեության գործարանը մարդկային ուղեղն է» և ոչ մարդկային հոգին առհասարակ (էջ 133)։

Հաճախ սխալներ են նկատվում Սարկավագից բերված քաղվածքներում. կա՞մ դժվար է ընկալվում քաղվածքի իմաստը, կա՞մ այն չի համապատասխանում Կ. Միրումյանի տված մեկնաբանությանը։

Նշված թերությունները փորձի պակասության հետևանք են, որոնք գիտական հաջորդ աշխատանքներում կհաղթահարվեն ու կուղղվեն։ Կարևորն այն է, որ Կ. Միրումյանի աշխատությունը մեթոդաբանական առումով ճիշտ է արտացոլում միջնադարյան մտավորականի հայացքների յուրահատկությունները։

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր